

ւած է արհեստի: Կրօնաւորելու փափաք ունեցած է կանուխէն, եւ դիմում կատարելով վանական իշխանութեան՝ 1977 Հոկտ. 1ին ձեռնադրուած է Սարկուազ Լուսարաբայեան Գերե. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսին:

«Սիւն», յանուն Ն. Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ բովանդակ Միաբանութեան, արտ. գինս կը շնորհաւորէ նորընտէրները, մաղթելով որ Տէրը առաջնորդ քլլայ իրենց եկեղեցանուէր ու ազգաշէն գործունէութեան, ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցիին եւ Հայ ժողովուրդին:

### ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՐԱՐԻ ՏԸՒՋՈՒԹԻՒՆ

19 Օգոստոս, Եսթրա. Կիրակոսի ժամերգութեան աւարտին, Լուսարաբայեան Գերե. Տ. Հայրիկ Արքեպ. Ալանեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Դպրութեան չորս առինաններ շնորհեց Ալեքս եւ Մարի Մանուկեան ժող. Վարժարանի բոլոր սաներուն: Անոնք, քիւով 30, Սրբազանին առջեւ ձեռնադրուեցին, լսելով որ երբեք եկեղեցւոյ տաներ, ընդունելու նախ խաչանշան կտրուի իրենց մազերուն, եւ ապա՝ ժամագիրք, ջահ եւ աւել, իբրեւ երգիչներ, ջանքերակներ եւ աւելածուներ Աստուծոյ նուիրուած այս Սուրբ յարկին: Նաեւ բանալի՝ որով խաւանչիւրը բացուի ապա դուր Տաճարին: Արարողութեան խաւար. լիովն էէ վարժարանի Փոխ-Տեսուչ Հոգե. Տ. Մանուկ Աբղ. Նրկաբեան:

Ապա, Լուսարաբայեան Սրբազանը Ուրար կրելու արտօնութիւն տուաւ ժողովոյ. Վարժարանի Դ. Գաւառանի ընթացքը բոլորած չորս սաներուն՝ Խաչիկ Գաւառանի, Հրաչ Զրիկեանի, Սերոբ Տէմիրճեանի եւ Սիմոն Նայիրեանի, որոնք դպրոցական վերամուտին անցան աւարտական դասարանին:

21 Մայիս, Կիրակի, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնասան մասրան մէջ, Գերե. Տ. Կիրեղ Նպա. Գոբիկեան վարդապետական Դպրոցանի իշխանութիւն շնորհեց Հոգեւորին Տ. Հայկազուն Աբղ. Մելիքեանին:

Հոգե. Հայրը յաջորդ օրն իսկ մեկնեցաւ Միացեալ Նահանգներ՝ իբր հոգեւոր հովիւ:

### ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին ամիսներուն, Ս. Արքուն Երեսկատարուած են հետեւեալ տեղական փոփոխութիւնները. —

Եկեղեցական ասպարէզէն ինքնակամօրէն հեռացած Հոգե. Տ. Գեղարզ Աբղ. Տաւուսլարեանի տեղ, Ժոնգ. Վարժարանի եւ Ընծայարանի Փոխ-Տեսուչ Նաւակուեցաւ Հոգե. Տ. Մանուկ Աբղ. Նրկաբեան: Հայր Մանուկ առակերտիկ եւս Ս. Արքայոյ Ընծայարանին, Պոլսոյ մէջ՝ Ամեն. Տ. Շնորհք Պատրիարքին ձեռնադրուած էր կուսակրօն քահանայ՝ 1976ին: Տարւոյ սկիզբը դիմած է Սրբազան Պատրիարքին եւ անգամակցած՝ Ս. Յակոբեանց Միաբանութեան:

Հայր Մանուկին տրուեցաւ նաեւ Մասկարաւորեան պատշօնը՝ փոխան Հոգե. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեանի, որ Բերդիկապոլի դիմումով, բաժնեկցելու համար Ս. Մեղիկեան Տաճարի Տեսչութիւնը, վախճանեալ Հոգե. Տ. Մեղիկ Վրդ. ի տեղ:

Ամմանի բազմամեայ Հոգեւոր Հովիւ Հոգե. Տ. Անուշաւան Վրդ. Զգոմեան վերադարձաւ Ս. Արքուն: Իր տեղը Նաւակուեցաւ Հոգե. Տ. Վահան Վրդ. Թովկապետ, որ պիտի վարէ միաժամանակ տեղւոյն Իզգապետան-Կիւլլեկեան վարժարանի Տեսչութիւնը: Իր վարած Աւագ Թարգմանի պատշօնը տրուեցաւ Հոգե. Տ. Ասպէս Աբղ. Պալեանի:

Տպարանի Ընդհ. Պատասխանատու Պր. Արայ Գալայեանը Ամերիկա մեկնած քլլաւ Տպարանի Տեսչութիւնը յանձնուեցաւ Հոգե. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեանի, որ կը վարէ նաեւ Ժամօրհնոյի պատշօնը:

Հոգե. Տ. Սեւան Վրդ. Վարկապետի տեղ (որ կը վարէ Ս. Հրեշտակապետաց վանուց տեսչութիւնը) Գերսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչ կարգուեցաւ Հոգե. Տ. Հայրիկ Աբղ. Գալայեանը:

«Սիւն», ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, կը շնորհաւորէ պատշօնակալ Հայրերը եւ կը մաղթէ անոնց արդիւնաւէտ պատշօնավարութիւն: